

Հայաստանի Վերանկախացման Տարեդարձի առթիվ Առաւել Հանդիսութիւն

20 Սեպտեմբեր 2005
Փէթախ Թիքվա

«Նայիրի» հասարակական կազմակերպութեան կողմէ մեզ ուղղուած հրաւերին ընդառաջելով Երուսաղէմէն շարժուեցանք Փէթախ Թիքվա, Թէլ աւիւէն 10 քիլոմէթր հիւսիս:

Փէթախ Թիքվայի կեդրոնական հրապարակի վրայ հաւուաքուած տասնեակ մը Հայերու ընկերակցութեամբ ուղղուեցանք սրահ ուր հանդիպեցանք առաւել 120 Հայերու, որնք հոն մէկտեղուած էին տօնախմբելու ներկայ Հայաստանի հիմնադրման տարեդարձի 14ամեակը:

Օրուան բացման խօսքը կատարեց նոյն «Նայիրի» կազմակերպութեան հիմնադիր անդամ Տիար Արտիոմ Չերնամուրեան, որը բարի գալուստ մաղթեց բոլոր ներկաներուն, որոնց կարգին Փէթախ Թիքվայի քաղաքապետարանի ներկայացուցիչ պրն. Քօթլէրին, որը քիչ ետք օրուան առթիւ իր զօրակացութեան խօսքը կատարեց մէջբերումներ կատարելով Բագույ մէջ 1990ին Հայոց դէմ Ազէրիներուն հեղինակած վայրագութեանց:

Հանդիսութիւնը տեւեց մօտ ժամ մը, որուն ընթացքին Հայաստանէն Իսրայէլ ներգաղթած Հայ անուն-մականուն արուեստագէտներ բացառիկ ելոյթներ ունեցան դաշնակի թէ օրկանի վրայ արժանանալով բոլորին հիացմունքին չ'ըսելու զարմանքին:

Բեմ հրաւիրուեցաւ նաեւ Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ի ատենապետը կատարելու իր խօսքը: Իր խօսքին մէջ եղբ. ատենապետը անդրադարձաւ այն իրողութեան թէ որպէս անմիջական անդրադարձ Հայաստանի յատկապէս ընկերային թէ տնտեսական ճգնաժամին այսօր Իսրայէլեան հողի վրայ կը գտնուին մօտ տասնեակ մը հազար ներգաղթած Հայեր, իր խօսքը շարունակելով ան ըսաւ թէ այս իրողութիւնը պատճառ չի կրնար ծառայել յուսախաբութեան ու շփոթի: Տուն վերադարձի երազը պէտք է մնայ իրենց կեանքը հունաւորող ազդակ, հետեւաբար առաւել թափով պէտք է շարունակել ազգապահպանման աշխատանքը:

Բայց եւ այնպէս քիչ ետք բեմ բարձրացաւ օրուան տօնախմբութեան գլխաւոր կազմակերպիչ դէմք եւ նոյն «Նայիրի» կազմակերպութեան ատենապետը, որը նշեց նոյն «Նայիրի» կազմակերպութեան հետապնդելի նպատակները, որոնց կարգին յիշեց այն թէ «Նայիրի» կազմակերպութիւնը կը միտի շրջանի Հայախօս Հրեաների կապը Հայաստանի հետ ամուր ու կենսունակ պահել ու առաւել զարգացնել փոխադարձ զբօսաշրջիկութեան կարելիութիւնները:

Վերջապէս, ներկայացուցիչը նշեց կարեւորութիւնը ներգաղթող երիտասարդութեան Իսրայէլեան միջավայրի ու ընկերութեան մէջ գրկընդխառնելու համընկուելու (integration):

Գեղեցիկ երեկոյթ էր մինչեւ իսկ տպաւորիչ այսուհանդերձ "Հայախօս Հրեաները" թէ ինթէկրացիայի հետաքրքիր երիտասարդութեան ապագայ ծրագիրները, չարչարեցին մեր միտքն ու հոգին ամբողջ վերադարձի ճամբին դէպի Ս. Քաղաք: